«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

| | |
|---|---|
| ԹԵՄԱ | Ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը տվյալ առարկայի դասավանդման գործընթացում |
| ԱՌԱՐԿԱ | Ռուսաց լեզու |
| ՀԵՂԻՆԱԿ | Մարինե Մեսրոպյան |
| ՄԱՐԶ | Արմավիր |
| ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ | Մեծամորի միջնակարգ դպրոց |

# Բովանդակություն


Ներածություն 2

1.Ինտեգրացված դասի առանձնահատկությունները: 3

2.Ինտեգրված դասի պլանավորում 7

Եզրակացություն 14

Գրականության ցանկ 16

# Ներածություն

Ուսումնական գործունեությունն իրենից ներկայացնում է նպատակամղված, հստակ կազմակերպված, բովանդակային առումով հարստացված և մեթոդապես հագեցած՝ ճանաչողական և դաստիարակչական շփման, փոխազդեցության, սովորողի և սովորեցնողի փոխհարաբերությունների համակարգ:

Ուսուցման կազմակերպական ձևերը պատմական տարբեր ժամանակներում տարբեր են եղել և պայմանավորված են եղել հասարակության զարգացման մակարդակով, գիտության զարգացման աստիճանով: Ուսումնական գործունեության հիմնական ձևերը դասակարգվում են տարբեր հիմքերով՝ ըստ մեթոդների, ուսուցման միջոցների, դասավանդողի և սովորողի փոխազդեցության բնույթով:

Աշխատանքի թեման խիստ արդիական է, ինչը պայմանավորված է ժամանակակից դպրոցում կատարվող վերափոխումներով, տեղաշարժերով, տեխնիկական և տեխնոլոգիական նորամուծություններով և մանկավարժական նոր տեխնոլոգիաների կիրառմամբ, որոնք հնարավորություն են ընձեռում ժամանակակից դպրոցում բարձրացնել դասավանդման գործընթացի արդյունավետությունը՝ ի հաշիվ դասի կառուցման առանձնահատկությունների:

Աշխատանքի շարադրման ընթացքում օգտագործվել են Վիգոտսկու, Կրուտեցկոյի, Պոդլասիյի, Սլաստենինի և այլ գիտնական-հոգեբան մանկավարժների աշխատությունները:

Աշխատանքի շարադրման ընթացքում մեր հիմնական նպատակը եղել է ժամանակակից

դպրոցում ինտեգրված ուսուցման առանձնահատկությունների ուսումնասիրումը:

Ելնելով մեր նպատակից՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

-Վերլուծել ինտեգրացված դասի առանձնահատկությունները

-Ներկայացնել ինտեգրացված դասի առանձնահատկությունները:

Մեր աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

## 1.Ինտեգրացված դասի առանձնահատկությունները:

Ինտեգրացված դասը հանրային կրթության ձևերից մեկն է: Այն իրականացնելու համար պահանջվում են նախապատրաստական լուրջ ջանքեր, սակայն փորձը ցույց է տվել, որ այդ դասերի արդյունավետությունը բավականին բարձր է: Յիմնականում երկու փոխկապակցված առարկաների դասի ընթացքում՝ 45րոպե,ունենում ենք աշխատող, ներդաշնակ սովորողներ:«Ինտեգրում»բառը նկատի ունենք տարբեր առարկաների, ուսումնական նյութերի մեջ մի ամբողջություն՝ փոխադարձ իրար լրացնող՝ և՛ իմաստով, և՛ ձևով: Այն չափազանց գրավիչ ձև է սովորողների համար, սովորողին տալիս է լիարժեք պատկերացում նյութի վերաբերյալ:Դա երկու նյութի խաչմերուկ է, որին հետևում է վերելքը, ապա՝ գագաթը՝ նպատակային դասը:

Այս երկու դաշնակից սուբյեկտների ներկայացումը տարբեր փուլերում հաջողությամբ է ավարտվում:Ինտեգրացված դասեր կարելի է անցկացնել օրինակ գրականություն-

պատմություն-երաժշտություն, քիմիա-կենսաբանություն-պատմություն և այլ առարկաներից:

Գիտությունների և արտադրության ինտեգրացման մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում գիտությունների համագործակցությունը՝ միջգիտական կապերը: Քանի որ ուսումնական առարկաները ուսուցանում են գիտությունների հիմունքները, ուստի հրատապ է դառնում նաև ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի իրականացումը: Ուսուցման արդյունավետությունը բարձրացնում են ոչ թե մեխանիկորեն սերտած ինտեգրացված տեղեկություններով, այլ իրականությունն միջառարկայական կապերով: «Ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ոչ թե ինտեգրացում, այլ ուսումնական առարկաների ընթացակարգային կորդինացում միջառարկայական կապերի, որոնք արտացոլում են բնության և հասարակության մեջ առկա կապերը»[1]: Մանկավարժական պրակտիկայում երբեմն նույնացնում են միջառարկայական կապերը իրականացնող և ինտեգրացված դասերը:

Ինտեգրացված դասերը պիտի տարբերել միջառարկայական կապերը իրականացնող սովորական դասերից, որտեղ ուսումնասիրվում են ոչ թե ընտրովի թեմաներ /ինչպես ինտեգրացված դասերի ժամանակ է արվում/, այլ տվյալ առարկայի դպրոցական ծրագրային նյութերը:

Ինտեգրացված դասերը լավ է նկարագրել Ի. Պ. Պոդլասին, գրելով. «Ինտեգրացված դասերին միավորվում են մեկ թեմային նվիրված տարբեր

[1] Подласый И. П., Педагогика начальной школы, М. 2000, էջ 233

առարկաներից գիտելիքների բլոկները: Ուստի շատ կարևոր է ճիշտ որոշել ինտեգրացված դասի գլխավոր նպատակը: Երբ որոշված է ընդհանուր նպատակը, արդեն առարկաների բովանդակությունից ընտրում են միայն այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են նպատակին հասնելու համար[2]: Սակայն դեռևս ստեղծված չեն բավականաչափ ինտեգրացված դասագրքեր, ընդգծված և համակարգված չեն ուսումնական նյութերը, որը ուսուցչի համար դժվարին խնդիր է: Սակայն ուսուցչի համար դժվար չէ նախապես պլանավորել, թե տվյալ առարկայից այս կամ այն թեման, ենթաթեման անցնելիս ինչպիսի կապեր է ստեղծվելու հարակից առարկաների միջև:

Ինտեգրացված դասերը հզոր խթան են հանդիսանում սովորողի հոգեկան գործունեությունում: Սովորողները սկսում են վերլուծել, համեմատել, որոնել երկու օբյեկտների ու երևույթների միջև կապը: Այն հոգնածությունը, ձանձրույթը, որը սովորողների մոտ նկատվում է միանման դասից, վերանում է, այս դեպքում դասը առաջացնում է հետաքրքրություն, աշխույժ: Ինտեգրված դասերը հաճախ ուղեկցվում են բացահայտումներով ու հայտնագործություններով, առաջ է գալիս ստեղծագործական, հետազոտական աշխատանքը: Բացի վերը նշվածից, այս տեսակ դասերը ստեղծագործ ուսուցչին հնարավորություն են տալիս հասնել նոր մակարդակի, բացահայտել իր համար տեղեկություններ, մտնել նոր փուլ, իսկ սովորողին՝ զարգացնել ստեղծագործական մտածողությունը, ինքնակրթվելու

[2] Федосеева В. Н., Кирюшкин Д. М., “Педагогика”, 1972, էջ 20

հնարավորություն ստեղծել: Ընդ որում, ուսումնական նյութերը պետք է լինեն մատչելի, ոչ ծանրաբեռնված, դասարանում ուսումնական գործընթացը պետք է համապատասանի սահմանային ծավալին: Սովորողը պետք է ստանա այնքան տեղեկություն,որ չխճճվի նյութերում:

Ինտեգրացված դասը սովորաբար նախապես պլանավորվում է: Դա անհրաժեշտ է և համապատասխանում է ուսումնական ծրագրին, պատրաստակամություն է այլընտրանքային դասի: Հաճախ դրանք դասեր են՝ ինտեգրված ըստ թեմայի ընդհանրացումների և գիտելիքների ամրապնդման:

Միջնակարգ կրթության ժամանակակից կողմնորոշումը սերտորեն կապված է համակարգչային և ժամանակից տեխնոլոգիաներին: Այնպես որ, դասերը, միանշանակ, ինտեգրված են համակարգչային գիտությանը,որով ամրապնդում են նոր գիտելիքները անհատական համակարգչային ուսուցման համար: Ժամանակակից սովորողները մեծ հաճույքով են աշխատում համակարգչով,որն էլ դասը դարձնում է ավելի հետաքրքրաշարժ: Արդյունավետ դասերը նաև լեզվական կողմնորոշում են, որոնք սովորաբար ունեն համեմատական բնույթ,օրինակ,որոշակի առումով, հայերենի քերականություն և անգլերեն լեզու:

Առանձնապես օգտակար են լինում գրականության, պատմության և երաժշտության ինտեգրացված դասերը, որոնք ընթացքում խաղ-բեմադրությունը հաճախ կազմակերպվում է գրական կամ սցենարային ստեղծագործության սյուժեի հիման վրա,այդ ընթացքում ընթերցածը, տեսածը կամ լսածը վերարտադրվում է ‘դեմքի’ վրա՝ տարբեր արտահայտչամիջոցների՝ երաժշտական և խոսքային նրբերանգների,

դիմախաղի, ժեստերի, կեցվածքի միզանսցենի (խմբավորման) օգնությամբ: Միշտ չէ, որ սցենարը խիստ կանոնակարգված է. Այն կարող է հանդես գալ որպես հենք, որի սահմաններում զարգանում է ինպրովիզացիան: Լ. Վիգոդսկին գտնում էր, որ ցանկացած խաղի մեջ առկա են բեմադրության տարրեր[3]: Ինտեգրատիվ դասը ձևավորվում է գեղարվեստական գործունեության տարբեր տեսակների միջոցով, սակայն այն միջառարկայական կապերի վրա հիմնված ամբողջական համակարգ է: Դրա կարևորագույն խնդիրը աշակերտի անձի դաստիարակությունն է, արվեստի միջոցներով նրանց արժեքային հարաբերությունների ձևավորումը: Որպես ամբողջական գեղարվեստամանկավարժական ձև,այն պետք է ունենա իր մեթոդական առանձնահատուկությունները. ապրումակցման կազմակերպում, արվեստի բարոյական-գեղագիտական էության ըմբռնում, այդուհետ՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերում:

Ժամանակակից դպրոցում ինտերգրացված դասերի և նորագույն ուսումնական մեթոդների կիրառումը հնարավոր չէ պատկերացնել առանց համակարգչային տեխնոլոգիաների: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համակարգիչը կարող է փոխել ուսուցման ընթացքը՝ դարձնելով ուսուցումը ավելի հետաքրքիր և արդյունավետ, իսկ ստացված գիտելիքներն ավելի խորացված և ընդհանրացված:

Կրթության որակի բարձրացումը հիմնականում որոշվում է ուսուցման ակտիվ գործիքների

[3] Выгодский Л. С., Воображение и творчество в детском возрасте: Психологический очерк. М., 1991.

կիրառմամբ: Գիտենք, որ ակտիվ ուսուցումը ենթադրում է սովորողների ներգրավում ուսումնական գործընթաց: Այդ դեպքում սովորողը պարտադիր պետք է ակտիվ գործի և այդ գործունեության ընթացքում բացահայտի, մշակի և կիրառի ստացված գիտելիքները[4]:

[4] Водопьянова Ю. Е.. Активные методы обучения подростков как одна из форм личностно-ориентированного подхода в учебно-воспитательном процессе: На материале естественнонаучных дисциплин, 2005, էջ 2

# 2. Ինտեգրված դասի պլանավորում

Կրթության բովանդակությունը առանձին առարկաներից պատրաստի գիտելիքների ամբողջություն չէ, այդպիսի ընկալումը չի համապատասխանում ժամանակակից պահանջներին և աշխարհի մասին մասնատված, ոչ ամբողջական պատկերացում է տալիս:

Այս խնդրի հնարավոր լուծումներից մեկը ինտեգրված, միասնական ուսումնական և թեմատիկ ծրագրերի, դասընթացների և պլանների ստեղծումն է, որը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթների ընկալմանը, գիտակցմանն ու ըմբռնմանը: Գլխավոր, ընդունված հիմնադրույթն այն է, որ մեզ շրջապատող աշխարհը միասնական ու ամբողջական է, ուստի ուսուցման առավել արդյունավետ տեսակը միավորված ամբողջական ուսուցումն է:

Միավորված ծրագրերը բնութագրվում են գիտության, տեխնիկայի, արվեստի տարբեր ոլորտներից գիտելիքների փոխներթափանցմամբ:

Միավորման /ինտեգրացիայի/ հիմք կարող են լինել.

- Բովանդակությունը /թեման, հասկացությունը, առանցքը/,
- Գործողություններն ու հմտությունները,
- Վերոնշյալ երկուսը միասին /ամբողջական.:

Միավորված ծրագրերը կառուցվում են այնպես, որ մի ոլորտի գիտելիքները հիմնվում են մի այլ ոլորտից ձեռք բերված գիտելիքների վրա: Այս մոտեցումը ենթադրում է համալիր պլանավորում, տարբեր բնագավառներից գիտելիքների, փաստերի, գաղափարների ու երևույթների սահմանում և իմաստավորում, ինչպես նաև դրանց գնահատում,

ինչը խթանիչ գործոն է սովորողների ճանաչողական և ստեղծագործական գործունեության համար:Այս մոտեցման հիմնական գործոնն այն է, որ ուսումնական առարկաները տարանջատված չեն միմյանցից, այլ սերտորեն փոխկապակցված են թեմայով,առանցքով:

Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերվում են ինտեգրված ուսումնական ծրագրերի հետևյալ տեսակները.

- Միջառարկայական,
- Բազմառարկայական,
- Անդրառարկայական:

Որպես միավորող առանցք՝ հաճախ հանդես է գալիս որևէ թեմա, որն ընդգրկում է մի քանի առարկաներ:

Ինտեգրված պարապմունքները իրականացվում են օբյեկտի բազմակողմանի քննությամբ,շրջակա աշխարհի իմաստալից ընկալմամբ, գիտելիքների համապատասխան համակարգի ձևավորմամբ, երևակայության ընկալմամբ, ստեղծագործական հետաքրքրությունների և դրական հուզական տրամադրության ապահովմամբ:

Մանկավարժության բնագավառի մի շարք տեսաբանների կարծիքով՝ ինտեգրված ուսուցումը երեխաների մեջ խթանում է աշխարհի ամբողջական պատկերի ձևավորումը: Ինտեգրված դասերի միջոցով հնարավոր է դառնում ձևավորել կենսականորեն անհրաժեշտ զանազան հմտություններ, հաղորդակցական տպավորություններով կիսվելու կարողություն և մշակույթ:

Ե՛վ տեսաբանները, և՛ պրակտիկ մանկավարժները հասկանում են, որ այսպիսի դասերի շնորհիվ երեխաները նույն առարկայի

վերաբերյալ ձեռք բերած իրենց գիտելիքները կիրառում են գործունեության տարբեր ոլորտներում: Այդ կերպ ուսուցման գործընթացը դառնում է առավել տնտեսված՝ չառանձնացնելով նկարչությունը, խոսքի զարգացումը, երգը, ֆիզկուլտուրան, և երեխաների մեջ ձևավորվում է աշխարհի վերաբերյալ ամբողջական պատկեր: Ինտեգրված դասերը երեխային թույլ են տալիս իրականացնելու իր ստեղծագործական բոլոր հնարավորությունները. Նա մտածում է, տրամաբանում, երևակայում, հետազոտում: Հարստանում է բառապաշարը, զարգանում են հաղորդակցական կարողությունները:

Ինտեգրված դասերը բնութագրվում են բազմակողմանի ուղղվածությամբ: Նման պարապմունքների հիմնական խնդիրներն են՝ երեխայի բազմակողմանի զարգացումը, տվյալ առարկայի մասին ամբողջական պատկերացումների ձևավորումը: Այս ամենի հետ մեկտեղ դասի այս ձևն ունի մի շարք առանձնահատկություններ.

•Ինտեգրված դասի ժամանակ առկա է գործունեության բազմաթիվ միջոցների խելամիտ կիրառում, որոնց առանցքային բովանդակության հիմքը մեկ թեմա է: Առաջադրանքները հստակեցվում են պարապմունքների յուրաքանչյուր փուլում:

•Ինտեգրված դասը կառուցվում է մեկ ամբողջական գործունեության հիմքով, որը միավորում է հսկայական տեղեկատվական դաշտ՝ փոխադարձ ներթափանցմամբ և ընդհանրացումներով:

•Ինտեգրված դասը սկզբունքորեն պահանջում է հստակ մտածողություն և տրամաբանույուն՝ ուսուցման բոլոր փուլերում: Սա նպաստում է համահավաք, կենտրոնացված ծրագրային նյութի

յուրացմանը՝ փոխգործուն աշխատանքների կիրառմամբ:

•Ինտեգրված դասը երեխային տալիս է բավականին լայն և վառ պատկերացումներ շրջապատող աշխարհի մասին, ուր նա իրապես ապրում է՝ փոխհարաբերությունների մեջ է երևույթների և առարկաների հետ, կապված է աշխարհում առկա բազմաթիվ նյութական և գեղարվեստական մշակույթների հետ: Հիմնական շեշտը դրվում է ոչ այնքան որոշակի գիտելիքների յուրացման , որքան ստեղծագործական մտածողության զարգացման վրա:

Սահմանված արդյունքները և ընկալումը վկայող ընդունելի փաստերը հստակ պատկերացնելուց հետո սկսվում է դասավանդման պլանավորումը:

Պլանավորման փուլում հարկավոր է քննության առնել մի շարք առանցքային հարցեր՝ ուղղված հատկապես աշակերտների գործունեությանը.

•Ի՞նչ գիտելիքներ և հմտություններ են պահանջվում աշակերտներից:

•Պահանջվող գիտելիքներն ու հմտությունները աշակերտներն ի՞նչ գործողությունների միջոցով կարող են յուրացնել:

•Ի՞նչ է հարկավոր մատուցել և ուսուցանել:

•Ինչպե՞ս լավագույնս կազմակերպել դասավանդման գործընթացը;

•Ի՞նչ նյութեր և ռեսուրսներ են անհրաժեշտ:

Ուսուցիչը պետք է անդրադառնա դասավանդման պլանավորման մանրամասներին, ընտրի դասավանդման մեթոդներ,նյութեր,որոշի դասերի հաջորդականությունը՝ ցանկալի արդյունքները

սահմանելուց և գնահատման հնարները կազմելուց հետո:

Ինտեգրված դասի նախապատրաստման համար անհրաժեշտ է հաշվի առնել պլանավորման հիմնական պահանջները.

- Ընտրել թեման,
- Պլանավորել դասերը, հիմնական նպատակն ու առաջադրանքները,
- Ըստ անհրաժեշտության փոփոխել առաջադրանքների հաջորդականությունը,
- Հստակեցնել դասի բովանդակությունը /վերլուծություն, ընտրություն, ստուգում/,
- Ապահովել նյութերը, որոնք ծառայում են դասի բուն նպատակին,
- Բացահայտել երեխաների ծանրաբեռնվածությունը /մտավոր, ֆիզիկական, բանավոր գործունեություն և այլն/:

Ինտեգրված դասեր կազմակերպել իս հարկավոր է հաշվի առնել`

-դասի նպատակը/ կարող է անհրաժեշտություն լինել կրճատելու թեմային հատկացված ժամաքանակը, սովորողների գիտելիքների հետ առաջացած դժվարությունները և այլն/,

-նյութի ընտրությունը/ անհրաժեշտ տեղեկություն, որը կծառայի դասի նպատակին/,

-համակարգող գործոնի որոշումը/տարբեր առարկաների տեղեկույթի միավորում`ընդհանուր հիմքի վրա/,

-դասընթացի նոր կառուցվածք իստեղծումը/գիտելիքների համակարգում ֆունկցիոնալ փոփոխություններ,

-բովանդակության մշակումը/ հին ձևերի վերացում, համակարգում, էլեմենտների միջև նոր կապերի ստեղծում/:

Կարևոր է նաև, որ ուսուցիչն իմանա, թե երբ և որ առարկաները կարելի է ինտեգրել, որպեսզի արդյունքն ակնհայտ լինի: Ինտեգրված դասի առանձնահատկությունն այն է, որ այդ դասերը կառուցվում են մեկ առարկայի հիմքի վրա, որն էլ գլխավորն է համարվում: Մյուսները նրան ինտեգրվում են` օգնելով ավելի ընդարձակ ուսումնասիրել գլխավոր առարկայի կապերը, խորը հասկանալու ուսումնասիրվող առարկայի էությունը, հասկանալ կապը առօրյա կյանքի հետ և հնարավորություն ունենալ ստացած գիտելիքները գործնականում կիրառելու: Տարրական դասարաններում ինտեգրված ուսուցման հիմքը բազմաբնույթ մտածողությունն է, որի կիրառումը խթանում է երեխաների գործնական կարողությունների զարգացմանը:

Ինտեգրված դասի ընթացքում՝ եթե ինչ-որ պահի առաջատար դեր խաղացել է ուսուցիչներից մեկը, երկրորդը չպետք է նստի ստվերում. նա ևս պետք է ակտիվ լինի՝ վերահսկի սովորողների աշխատանքը, օգնի կամ պատրաստվի հաջորդ փուլին: Դասի վերջում բոլոր սովորողները պետք է ինքնուրույն բացահայտեն այդ միջառարկայական կապը, նպատակը:

Ինտեգրված դասերի առանձնահատկությունները հետևյալն են.

1. Նախ և առաջ՝ այն հստակեցնում է ուսումնական նյութերի մեծ տեղեկատվություն, որի շնորհիվ իրականացվում է երեխայի սկզբունքների հիմնական հատկանիշներից մեկը:
2. Շրջապատող աշխարհին ինտեգրված դասերի ժամանակ ընկալվում է իր բազմազանությամբ և միօրինակությամբ՝ ապահովելով երեխայի

ամբողջական պատկերացումներն ու բազմազան կապերը՝ տարբեր օբյեկտների և երևույթների միջև:Նման դասերի շնորհիվ հնարավորություն է ստեղծվում իրականացնել ընդհանուր եզրակացությունների հանգեցնող գործողություն: Օրինակ՝ երաժշտության, գրականության,նկարչության միջոցով հնարավոր է վերածել այնպիսի հասկացության, ինչպիսին տրամադրությունն է: Կարևոր է որ կրթական ոլորտները մեկը մյուսի հետ համակցված լինեն կապող ընդհանուր առանցքով:

3. Գործունեության տարբեր տեսակների շնորհիվ ինտեգրված դասեի ընթացքում վերանում են հոգնածությունն ու լարվածությունը:

4. Ինտեգրված դասերն հնարավորություն են տալիս ոչ միայն երեխաներին, այլև ուսուցիչներին:

5. Պարբերաբար անցկացվող ինտեգրված դասերն առավել ապես նպաստում են երեխայի խոսքի զարգացմանը: Նրա մեջ ձևավորվում է համեմատելու, ընդհանրացնելու, եզրակացնելու կարողություններ:Վերանում են լարվածությունը, ծանրաբեռնվածությունը, ընդլայնվում է մտահորիզոնը: Ձևավորվում է կողմնորոշվելու ներդաշնակ և ինտելեկտուալ զարգացման հնարավորություն:

Ինտեգրացված դասերը հզոր խթան են հանդիսանում սովորողի հոգեկան գործունեությունում: Սովորողները սկսում են վերլուծել, համեմատել, որոնել երկու օբյեկտների ու երևույթների միջև կապը: Այն հոգնածությունը,ձանձրույթը,որը սովորողների մոտ նկատվում է միանման դասից,վերանում է,այս դեպքում դասը առաջացնում է հետաքրքրություն:

Ինտեգրված դասերը հաճախ ուղեկցվում են բացահայտումներով ու հայտնագործություններով, առաջ է գալիս ստեղծականությունը, հետազոտական աշխատանքը: Բացի վերը նշվածից, այս տեսակ դասերը ստեղծագործ ուսուցչին հնարավորություն են տալիս հասնել նոր մակարդակի, բացահայտել իր համար տեղեկություններ, մտնել նոր փուլ, իսկ սովորողին՝ զարգացնել ստեղծագործական մտածողությունը, ինքնակրթվել ու հնարավորություն ստեղծել: Ընդ որում, ուսումնական նյութերը պետք է լինեն մատչելի, ոչ ծանրաբեռնված, դասարանում ուսումնական գործընթացը պետք է համապատասխանի սահմանային ծավալին: Սովորողը պետք է ստանա այնքան տեղեկություն,որ չխճճվի նյութերում:

Ինտեգրված դասերը նպաստում են աշխարհի ամբողջական պատկերի ձևավորմանը, բնության, հասարակության մեջ տեղի ունեցող երևույթների միջև կապերի բացահայտմանն ու ընկալմանը: Ինտեգրումը հենց գիտական կապերի մերձեցման գործընթաց է, որն ուղեկցվում է տարբերակված ուսուցմամբ: Ինտեգրման գործընթացը միջառարկայական կապերի բարձրագույն ձև է և ուսուցման որակապես նոր աստիճան:Ինտեգրումը հնարավորություն է տալիս աշակերտին ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ, առաջացնում է հետաքրքրություն ուսման նկատմամբ, բարձրացնում է նրա իմացական կարողությունների մակարդակը: Տարրական դասարաններում ինտեգրման գործընթացն ունի իր առանձնահատկությունները և հիմնականում կրում է կոլեկտիվ բնույթ` : Երեխաները ուսուցման վաղ շրջանում ծանոթանում են շատ

հասկացությունների, երևույթների, առարկաների, սակայն դրանց մասին ունենում են տարրական պատկերացումներ: Ուսումնառության ընթացքում այդ պատկերացումների շրջանակը ընդարձակվում է: Նրանք ստանում են նորանոր գիտելիքներ` լրացնելով իրենց իմացածը: Այստեղ է, որ առաջ է գալիս ինտեգրված դասերի հիմնական դժվարությունը, քանի որ հարկավոր է պահպանել ցանկացած թեմայի դինամիկ զարգացումը:

Ինտեգրված դասերն իրենց հերթին հնարավորություն են տալիս ուսուցչին կրճատել որոշ թեմաների ուսուցման ժամկետները, բացառել տարբեր առարկաներից կրկնվող նյութերը, կոնկրետ նպատակից ելնելով` մեծ ուշադրություն դարձնել այն թեմաներին, որոնք անհրաժեշտ է համարում ուսուցիչը: Ինտեգրված դասերը թուլացնում են աշակերտների լարվածությունը, հանում են ձանձրույթը, քանի որ նրանք մի գործունեության ձևից անցնում են մեկ այլ գործունեության:

Ինտեգրման հիմնական և պարտադիր պայմաններից է աշակերտների ինքնագործունեության դերի բարձրացումը, քանի որ ինտեգրումը մյուս առարկաների հաշվին լրացնում է ուսումնասիրվող նյութի թեմատիկան, առաջ է բերում երևույթների ավելի խոր վերլուծության և ընդհանրացման: Ուսուցչից պահանջվում է լրացուցիչ պատրաստվածություն, բարձր ինտելեկտ, մանկավարժական վարպետություն:

Կարևոր է նաև, որ ուսուցիչն իմանա, թե երբ և որ առարկաները կարելի է ինտեգրել, որպեսզի արդյունքն ակնհայտ լինի: Ինտեգրված դասի առանձնահատկությունն այն է, որ այդ դասերը

կառուցվում են մեկ առարկայի հիմքի վրա,որն էլ գլխավորն է համարվում: Մյուսները նրան ինտեգրվում են` օգնելով ավելի ընդարձակ ուսումնասիրել գլխավոր առարկայի կապերը,խորը հասկանալու ուսումնասիրվող առարկայի էությունը,հասկանալ կապը առօրյա կյանքի հետև հնարավորություն ունենալ ստացած գիտելիքները գործնականում կիրառելու: Տարրական դասարաններում ինտեգրված ուսուցման հիմքը բազմաբնույթ մտածողությունն է, որի կիրառումը խթանում է երեխաների գործնական կարողությունների զարգացմանը:

## Եզրակացություն

Ուսումնասիրելով թեման՝ եկա հետևյալ եզրակացության, որ ինտեգրված դասի նախապատրաստությունը սկսվում է դասի մանրամասն պլանը կազմելով: Փուլ առ փուլ, քայլ առ քայլ ընթանում է դասը: Յուրաքանչյուր փուլ ցույց է տալիս՝ ինչպես ճիշտ օգտագործել ժամանակը:

Ինտեգրված դասի նախապես պլանավորվումը անհրաժեշտ է և համապատասխանում է ուսումնական ծրագրին, պատրաստակամություն է այլընտրանքային դասի:

Ինտեգրված դասի նախապատրաստման համար անհրաժեշտ է հաշվի առնել պլանավորման հիմնական պահանջները.

- Ընտրել թեման,
- Պլանավորել դասերը, հիմնական նպատակն ու առաջադրանքները,
- Ըստ անհրաժեշտության փոփոխել առաջադրանքների հաջորդականությունը,
- Յստակեցնել դասի բովանդակությունը /վերլուծություն, ընտրություն, ստուգում/,
- Ապահովել նյութերը, որոնք ծառայում են դասի բուն նպատակին,
- Բացահայտել երեխաների ծանրաբեռնվածությունը /մտավոր, ֆիզիկական, բանավոր գործունեություն և այլն/:

Դասընթացների ինտեգրման մեթոդիկան արդյունավետ ճանապարհ է կրթության սկզբնական օղակի կատարելագործման համար:

Միջնակարգ կրթության ժամանակակից կողմնորոշումը սերտորեն կապված է

համակարգչային և ժամանակից տեխնոլոգիաներին: Այնպես որ, դասերը, միանշանակ, ինտեգրված են համակարգչային գիտությանը, որով ամրապնդում են նոր գիտելիքները անհատական համակարգչային ուսուցման համար: Ժամանակակից սովորողները մեծ հաճույքով են աշխատում համակարգչով, որն էլ դասը դարձնում է ավելի հետաքրքրաշարժ:

Այսպիսով, ինտեգրված դասը դառնում է նաև գրավիչ դերախաղ, սեմինար, քննարկում, ոչ թե գիտելիքների ծավալի խցկում: Այսօր մանկավարժությունը հակված է մտածելու, որ նմանատիպ դասերը սովորողի՝ մարդկային դրսևորման հիմք կարող են հանդիսանալ: Այն նպատակ ունի նաև ուսուցչին օգնել հարմարվելու վառ, աշխույժ, անհատական հետաքրքրություններով լի սովորողին:

## Գրականության ցանկ


1. Подласый И. П., Педагогика начальной школы, М. 2000
2. Федосеева В. Н., Кирюшкин Д. М., “Педагогика”, 1972
3. Выгодский Л. С., Воображение и творчество в детском возрасте: Психологический очерк. М., 1991.
4. Водопьянова Ю. Е.. Активные методы обучения подростков как одна из форм личностно-ориентированного подхода в учебно-воспитательном процессе: На материале естественнонаучных дисциплин, 2005